



Ուղղուած՝
ՀՀ սփիւռքի նախարար
տիկին Հրանուշ Յակոբեանին
Երեւան

Աթէնք, 29 Յոկտեմբեր 2010

Յարգարժան տիկին նախարարուհի

Սրտաբուխ շնորհակալութիւններս եւ գոհունակութեան խորին զգացումներս կ'ուզեմ Ձեզի փոխանցել, կարելոր այն փորձառութեան համար, որ ընծեյեցիք մեր բոլորին, կազմակերպելով լրատուամիջոցներու համահայկական խորհրդատողովը, Ստեփանակերտի մէջ:

Նշանակալից այս նախաձեռնութիւնը, որ ձեր անձնական կնիքը կը կրէր սկիզբէն մինչեւ վերջ, խորապէս տպաւորեց մեզ՝ կազմակերպչական իր արդիականութեամբ, որ յաջողեցաւ քով-քովի բերել հայաշխարհի լրատուական գործօններու ներկայացուցիչները, այսպէս լաւագոյն մեկնարկը տալով յառաջիկայ համագործակցութեանց:

«Ազատ Օր»-ի խմբագրութեան, այլ նաեւ յունահայութեան երախտագիտական զգացումները կ'ուզեմ ձեզի փոխանցել, մեր օրաթերթին հանդէպ ցուցաբերուած գուրգուրանքի եւ գնահատանքի զգացումներուն համար:

Կ'ուզենք անգամ մը եւս ձեզ հաւաստիացնել՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութիւններուն ընդառաջելու մեր պատրաստակամութեան մասին, խորապէս գնահատելով ձեր իրագործած գործունէութիւնը:

Կը մաղթենք, որ յաջողութիւններով պսակուի միշտ ձեր աշխատանքը, ի շահ հայ ազգին:

Յարգանքներով՝

Հռիփսիմէ Յարութիւնեան

«Ազատ Օր» օրաթերթի խմբագիր

Աթէնք - Յունաստան

AZAT OR ARMENIAN DAILY NEWSPAPER - 8 Aristotelous 176 71, Kallithea - GREECE
Tel: 210 95 75 302 Fax: 210 95 72 851 - E-Mail: info@azator.gr

www.azator.gr